

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուսավիտութեան վարչութեան մասին :

(Տես Հտ. ԺԳ. Երես 329)

Ի այց ինչ աւելորդ տեղը ես աս դէպքերս պատմեմ, երբոր նոյն Բզգային ժողովքը որ աս բարերար Թագաւորին գահին վերջի սասանմունքը տուաւ, անոր առաքինութեանցը, և հպատակացը իր վրայ ունեցած սիրոյն տուած ճոխ վկայութեամբը կը խնայէ ինծի նոյնը կրկնելու. վասն զի վախճալով Բզգային ժողովքը որ իր մեքենայած դաւադրութիւնը օտար զօրքերու օգնութեան գալովը պարապի չելայ, աս բանս խափանելու համար Թագաւորին աղերսագիր մը տուաւ որուն մէջը կ'ըսէր թէ Իր Բարոյ անարարութիւնը, Իր Դարգասիրտէան հաւաքութիւնը, և Ժողովրդէան ալ իրեն վրայ ունեցած փոխադարձ երախտագիտութիւնը, շատ աւելի ընտիր և զօրաւոր պահապաններ էին իր իշխանութեանը, քան թէ աշխարհիս բոլոր զօրութիւնը մէկտեղ առած. վերջէն կ'աւելցնէ. « Ինչպէս կարելի է, տէր արքայ, որ կարենայ մէկը երկւ բայութիւն ցուցնել ձեր հպատակացը վրանիդ ունեցած սիրոյն և հպատակութեանը. միթէ գո՞ք պատճառ եղաք Թափուած արեանը. միթէ գո՞ք անգութ ու անողորմելի էք. միթէ զեղծաբ ձեր իշխանութեամբը. միթէ ժողովուրդը զձեզ կամ ձեր անունը կը բամբասէ աս բաներուս վրայ խօսելու աւտէն. որուն մտքէն կամ բերնէն ելած կրնայ ըլլալ թէ ձեր լուծը անտանելի է, և կամ ձանձրացած ըլլան Պորպոնեանց իշխանութեանէն: Այ՛, բնաւ ոչ: Ի՞նչ անիրաւ զրպարտիչներն են աս ըսողները: Ի այց մենք կը հարցնենք. ո՞ր են արդեօք կառավարութեան և Թագաւորին Թշնամիները, զորոնք հարկ ըլլայ ընկճել. ո՞ր են ապստամբները, շփոթութիւն հանելու ետեւէ եղողները, զորոնք զսպել հարկ ըլլայ: Ի՞նչ արքազաքին և բոլոր տէրութեան մէջ այս

ձայնս կը լսուի. Մենք կը սիրենք մեր քաղաքը, կ'օրհնենք զՍտոռաս որ իր սիրոյն առաւելոյնքիւնը ցուցնելոյ հաւանք գիւնքը մեզի քաղաքը տոռաւ: »

Ի՞նչ ասանկ ճամբաներ բանեցուցին Թագաւորին Թշնամիները զինքը կործանելու համար: Աշխարհութեան, սիրոյ և յարգութեան քողով պատրուակեցին իրենց սրտին չարութիւնը, ինչուան որ ապահովցան իրենց ուժին վրայ զինքը ճնշելու համար. ու երբոր իրենց վախճանին հասան՝ յայտնի բռնութեան և զրպարտութեան ձեռք զարկին, զինքը աշխարհէս վերցնելու համար: Եթէ խեղճը իրեն լարուած որդայութիւն մէջը ընկաւ, պատճառը իր բարեսրտութիւնն էր. որով միշտ նախամեծար կը համարէր ուրիշի կարծեացը անսալ քան թէ իր մտքին. և որովհետեւ ինքը պարզսիրտ, ազնուական և առաքինի էր, անոր համար չէր կրնար հաւատալ որ մարդս այնչափ անարգ և չարասիրտ կարենայ ըլլալ:

Երբ նորէն մեր նիւթին դառնալով կ'ըսեմ, որ Լուսավիտութեան իշխանի մը կարեւոր սեպուած ամէն առաքինութիւններն ունենալէն զատ՝ զարգարուած էր նաեւ ան ամէն ձիրքերով որ հարկաւոր են որ և իցէ մարդու: Եւսածներս անանկ բաներ են որ բոլոր Վաղղիոյ ծանօթ են. ինչպէս իր իմաստուն կառավարութիւնը, իր հաւատարիմ ամուսին, գորովալից հայր ու կրօնասէր իշխան մը ըլլալը, ու սովորակաւնէ աւելի մեծանձն՝ ձախորդութեանց մէջ: Իր ուրիշ պարտքերը կատարելէն ետքը աւելցած ժամանակը ձեռագործի զբաղելով կ'անցընէր. ասով կ'ուզէր նմանիլ հիներուն իմաստուն խստութեանը, որոնք իրենց ժամանակը անօգուտ չանցընելու համար՝ իրենց յօժարութեանը յարմար օգտակար աշխատութեան մը կը պարապէին, որպէս զի հոգին չմեղկանայ և մարմինն զօրանայ: Եթէ զինքը խաղալու հրաւիրէին՝ կ'ախորժէր քիչ ստակով խաղալ. վասն զի խաղը ծանր աշխատութիւն

ներէն ոգի առնելու համար միջոց մը կը սեպէր միայն և ոչ եթէ ուրիշ բան։ Այլ թէպէտև ամէն տեսակ զուարճութիւններ ունէր․ բայց ինքը առաքինաբար կեանքը անցուց առանց չորս կողմը լարուած որոգայթից մէջ իյնելու։

Հոգւոյն վեհանձնութիւնը՝ որով իր յատուկ կիրքերը սանձելով շատ տեսակ առաքինութեանց տէր եղած էր, առաջ կու գար մասնաւորապէս իր կրօնասիրութեանն որն որ լաւ տողորուած ըլլալով սրտին մէջ, ատելի կ'ընէր իրեն որ և իցէ ամբարշտութիւն, և անոնց հետ մէկտեղ այն ամենայն նորութիւնները, որոնք կրօնքի սրբութեանը արատ մը կրնային բերել։ Այնչափ հաստատուն կեցաւ կրօնից ան հին և բազմաբեղուն բունին վրայ որ Վրիստոսէ առաքելոց, և առաքեալներէն ալ անցաւ եկեղեցւոյ․ ասով միշտ հեռու կը կենար այն տեսակ մարդիկներէ որոնք որ անտեղութեամբ մը մտքերնին դրեր էին լստուծոյ գործը նորոգելու և կամ կատարելագործելու։ Բայց արդէն անցեալ դարուն կիսէն սկսած՝ Վաղղիոյ մէջ խռովարար մարդիկներու մէկ նոր ազանդ մը հաստատուած էր, որոնք թըշնամի էին առ հասարակ որ և իցէ կրօնից, բարի վարուց և կառավարութեց, և իրենք զիրենք անմիտ պարծանօք փիլիսոփայ կ'անուանէին։ Վէպքը այնպէս բերաւ որ աս անպիտան մարդիկներէն խել մը հոգի 1789ին անդամ եղան ընդհանրական կառավարութեան, և վերջէն հաստատուած Բզգային ժողովներու, նախ Արսայլ և ետքը Բարիզ․ աս դէպքս յարմար առիթ սեպելով, ամենայն կերպով ջանացին իրենց փնասակար սկզբունքները սերմանել․ և որպէս զի մտքերնին դրած կարենան զուխ հանել՝ բոլոր ուժերնին կրօնքի դէմ թափեցին, ապահով ըլլալով որ թագաւորութեան հաստատութիւնը կրօնքն էր․ ուստի հրովարտակ մը հրատարակեցին, որուն մէջը իրենք զիրենք ազատ սեպելով կրօնքի պարտքերէն, կ'եղծանէին անոնց իշխանութիւնը որոնք լստուծմէ կար-

գեալ են առաջնորդ և ուսուցիչ ժողովրդեան․ և այս հրովարտակիս անունը դրին Սահմանադրութիւն Գաղափար, վասն իղբի։ Բայց պէտք էր որ Բզգային ժողովքին վճռածը թագաւորը հաստատէր որ կարենար օրինաց ուժ ունենալ․ ուստի թագաւորը ի սկզբան մերժեց և չուզեց հաստատել․ բայց վերջը անոնց աղաչանքներէն ու խոստմունքներէն շարժած և կամ վախնալով եղած սպառնալիքներէն, և նուիրակներուն սուտումուտ խօսքերէն խաբուելով, վերջապէս ստիպուեցաւ վճիռնին ընդունելու։ Ամանք կը կարծեն որ թագաւորը աս պայմանով հաստատած ըլլայ հրովարտակը, որ նախ գերագոյն Վեհահայրապետին հաւանութիւնը առնուի և ետքը հրատարակուի։ Բայց ազգային ժողովքը վախնալով որ չըլլայ թէ խափանուի՝ հրամայեց որ մէկէն ի մէկ հրովարտակին օրինակները ամէն քաղաքներու կառավարութեանց բաժնուին։ Ինչ ալ որ ըլլայ, այս ստոյգ է որ՝ հազիւ թէ իմացաւ թագաւորը որ այս հրովարտակը կրօնքը ի հիմանց կը խախտէր, որովհետև ալ ետ կանչել չէր կրնար, սկսաւ աս իր վայրկեանական ակամայ ու չճանցած սխալմանը թէ խօսքով թէ գրուածքով և թէ գործքով ձեռքէն եկած դարմանն ընելու․ և ամենևին թոյլ չտուաւ որ իր մատրանը ծառայութեան մէջ կարենան մտնել ան քահանաները որոնք երգում տուած էին աս վերի ըսած հրովարտակին պահպանութեանը։

() ր մը ժողովքին նուիրակներէն մէկը այսպիսի առիթ մը մէջ թագաւորին խել մը թախանձանք և սպառնալիք ընելէն ետքը, թագաւորը հանդարտութեամբ ասանկ վեհանձն պատասխան մը տուաւ․ «Պարոն, ինչպէս որ իրենք ազատութիւն ունին աս նորահնար կրօնքնին պաշտպանելու, տարակոյս չկայ որ ես ալ նոյնպէս ազատութիւն պէտք է ունենամ ան կրօնքին հետեւելու զորն որ ճմարիտ կը ճանչնամ․ չեմ ուզեր որ աս նիւթիս վըրայօք խօսակցութիւն ըլլայ․ գիտնաս

որ ես իմ հաւատքս չեմ կրնար զոհել ,
և ոչ ալ թողուլ զանիկայ ,» :

Լէւորդ կրսեպեմ | ուղղովիկոսի կրօնասիրութիւնը հաստատելու համար ուրիշ երկայն պատճառներ և ցուցմունքներ մէջ բերելու . վասն զի խիստ լաւ կերպով կը հաստատէ ըսածնիս իր կըտակին մէջ , որով միայն կրնան ապագայք ճանչնալ թէ ինչպէս կը սիրէր այն կրօնքը որուն մէջը ծնած էր , և թէ ինչպիսի արժանաւոր յաջորդ մըն էր սրբոյն | ուղղովիկոսի :

Որչափ որ | ուղղովիկոսի թշնամիները կը զօրանային՝ այնչափ ալ կը բռնանային իր վրան , ու միանգամայն իր անձին դէմըրած անպատկառ նախատինքներն ալ երթալով կը շատցնէին . բայց ասոնցմով ուրիշ բան չկրցան ընել իրեն , բայց եթէ հոգւոյն արիութեան և մեծութեանը նոր փայլ մըն ալ աւելցնէ :

1792ին յունիսի 20ին , բաղմաթիւ գունդ մը չարագործ մարդկանց հրացան և նիզակ ձեռուրնին պահապան դրուեցան Սիւլլըռիի պալատին , ուր որ թագաւորը իր ընտանեօքը արգելուած կեցած էր . ասոնք երբոր բռնութեամբ պալատին դուռը բանալ կ'աշխատէին , թագաւորը իմանալով աս բանս՝ ինքը մինակ առջևնին ելաւ ու բնակարանին դուռը բացաւ : Լնդգամները վազեցին մէկէն չորս կողմը առին՝ ու մէջերէն մէկը յանդգնեցաւ ինչուն նիզակի հարուած մ'ալ տալ թագաւորին . բայց մօտ եղող զինուորներէն մէկը աւելի մարդասէր գտնուելով՝ խափանեց հարուածը : Լն ատեն չարագործներուն գլխաւորը հեգնելով մը՝ « Ս'ի վախնար ,» ըսաւ թագաւորին . « Լն վախնամ , պատասխանեց թագաւորը . — անոնք պէտք է մահուանէն վախնան , որոնց սիրտը պարզ և մաքուր չէ ,» . աս ըսելով բռնեց զինուորի մը ձեռքը որ քովը կեցեր էր , ու ըսաւ . « Ի՛նք բարեկամ , դիր ձեռքդ սրտիս վրայ , և ըսէ սրտնայ թէ սովորականէն աւելի ուժով կը նետէ սիրտս ,» : Լնս դիւցազնական արութիւնը հանդարտե-

ցուց քիչ մը նոյն ատեն այն անպիտաններուն կատաղութիւնը :

Բայց խեղճը աւելի մեծագոյն փորձերու պահուած է եղեր , ինչպէս որ Պ . Վէրիի օրագրութեանը մէջ պիտի տեսնենք , որն որ 1792 օգոստոսի 10էն կը սկսի :

ՀԱՆՍՈՍՈՒԹԻՒՆ

Հին ազգաց վաճառականութեանը վրայ հաւատարմ տեղեկութիւն :

Լրդեօք վաճառականութիւնը ընկերութեան սկիզբէն անբաժանելի բան մը համարելու է , թէ իրեն յառաջագիմութեանը պտուղը , վիճի տակ մնացած խնդիր մըն է , որուն լուծումը դիւրին չէ : Ի՞նչ որ մարդկային ընկերութեան առջի ժամանակները սկսած է վաճառականութիւնը՝ պէտք է որ քիչ տեսակ ու ան ալ կենաց կարեւորագոյն նիւթերուն վրայ եղած ըլլայ : Եւ այն իսկ հոմերոս , առջի հին ժամանակներու վրայ խօսելով իր Իդիականին մէջ , կը յիշատակէ քանի մը տուրեւառ ազգաց վաճառականութեան վիճակը , որն որ զէնքերու և ուրիշ ասոնց նման հարկաւորնիւթերու փոխանակութեան վրայ կը կայանար : Եւ ընդ ժամանակները քանի որ դեռ ազգ ազգի հետ ունեցած հաղորդակցութեան ճամբաները քիչ էին ու դժուար , վաճառականութիւնն ալ չէր կրնար պէտք եղած բարգաւաճանքն ունենալ , և ան փոխանակութիւնն ալ որ ծովու մօտի ազգերը իրարու հետ կ'ընէին , և որոնց վրայ որ հին պատմագիրները կը խօսին , միայն Սիլերիկրական ծովուն եզերացը վրան էր : Եւ այն ալ վաճառականութեան նիւթերը ուրիշ բան չէին՝ բայց եթէ կենաց պիտոյիցամենահարկաւոր ապրանքները , ինչպէս ցորեն , արջաւ , զգեստեղէն , և այլն : Եւ վաճառականութիւնը բուն ան ատեն սկսաւ զարգանալ , երբ որ ազգաց և ճարտարութեանց աճելով , ու նոր աշխարհներու հետ զհա-